ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀՀ ՏՄԲՀ- ԷԱՃ-ԱՊՁԲ-18/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Բերդ
Լևոն Բեկի 5

« 17» սեպտեմբերի 2018 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

նախագահ Կ. Սարգսյանը
անդամներ՝ Մ. Գևորգյանը , Ն. Օհանյանը
քարտուղար՝ Ն. Սողոմոնյանը

Հիմք ընդունելով Բերդի համայնքապետարանի կողմից ՀՀ ՏՄԲՀ- ԷԱՃ-ԱՊՁԲ-18/01 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով կայացած շինարարական նյութերի ձեռքբերման մրցույթի հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետև Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից՝ «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ից,«Հայր և որդի Մելքումյաններ» ՍՊԸ-ից, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ից ստացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագիրը)՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Բերդի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ՀՀ ՏՄԲՀ- ԷԱՃ-ԱՊՁԲ-18/01 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով մրցույթում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցներին՝ «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ,«Հայր և որդի Մելքումյաններ» ՍՊԸ-ին 3-րդ,6-րդ և 7-րդ, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 4-րդ և 5-րդ չափաբաժիններով հայտարարել որպես ՀՀ ՏՄԲՀ- ԷԱՃ-ԱՊՁԲ-18/01 ծածկագրով մրցույթում ընտրված մասնակիցներ:
2. «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ի,«Հայր և որդի Մելքումյաններ» ՍՊԸ-ի, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել www.procurement.am կայքում և www.armeps.am համակարգով ուղարկել ընթացակարգի մասնակիցներին "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ 1-ին,2-րդ 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար սահմանվում է 10 օր,3-րդ,6-րդ և 7-րդ չափաբաժինների համար չի սահմանվում :

ՀՀ ՏՄԲՀ- ԷԱՃ-ԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել պայմանագրի կնքման օրը:

3. Սույն արձանագրության պատճենը տրամադրել ՀՀ ՏՄԲՀ- ԷԱՃ-ԱՊՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներին:

Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Կ. Սարգսյան

Անդամներ՝ _____ Մ. Գևորգյան

_____ Ն. Օհանյան

Քարտուղար՝ _____ Ն. Սողոմոնյան